ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի 2019 թվականի թիվ 701-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒ ԼԱԼԱ ԳՐԻՇԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին կետով ու նկատի ունենալով Լալա Կարապետյանի 2019 թվականի օգոստոսի 12-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Լուծել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Անգեղակոթ համայնքի ղեկավարի ու Լալա Գրիշայի Կարապետյանի միջև 2001 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված գյուղատնտեսական նշանակության 2.74հա վարելահողերի (վկ.՝ 0013065 1.2հա, վկ.՝ 0013066 1.54հա) վարձակալության պայմանագիրը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 13
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի 2019 թվականի թիվ 702-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԻՍՐԱՅԵԼ-ՕՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերն ու նկատի ունենալով «ԼՈԿԱ» ՍՊԸ-ի տնօրեն Ռուզաննա Ռազմիկի Մելքոնյանի 2019 թվականի օգոստոսի 12-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սիսիան քաղաքի Իսրայել-Օրի փողոց թիվ 4ա հասցեում գտնվող 71.55քմ անշարժ գույքը՝ բնակարանը (վկ.՝ N 11012018-09-0008), վերահասցեավորել և տրամադրել Սիսիան քաղաք, Իսրայել-Օրի փողոց, թիվ 4/1 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 13
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի 2019 թվականի թիվ 703-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՅԻՍԻ 28-Ի ԱՆՎԱՆ ԱՅԳՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերն ու նկատի ունենալով Համլետ Բագրատի Թովմասյանի 2019 թվականի օգոստոսի 12-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Մայիսի 28-ի անվան այգում գտնվող անշարժ գույքը՝ 0.0500հա հողամասը, հասցեավորել և տրամադրել Սիսիան քաղաք, Մայիսի 28-ի անվան այգի, թիվ 9/2 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 13
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2019 թվականի թիվ 704-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱՍՐՈԼԼԱՀ ՖԱՐԱԶՄԱՆԴՆԻԱ ՍԵՅՖՈԼԼԱՀԻՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 6-րդ կետերն ու նկատի ունենալով անհատ ձեռնարկատեր Նասրոլլահ Ֆարազմանդնիա Սեյֆոլլահի հայտը՝ *որոշում եմ.*

1. Բավարարել Սիսիանի համայնքի Սիսիան-Իշխանասար խճուղում գործող Ա/Ձ Նասրոլլահ Ֆարազմանդնիա Սեյֆոլլահի 2019 թվականի համար ներկայացրած հայտը՝ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն ստանալու մասին:
2. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնին՝ 3 օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 14
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2019 թվականի թիվ 705-Ա

ԱՇՈՏ ԿԱՌԼԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ և 26-րդ կետերով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219^{1} -ին պրիմ հոդվածի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների, 37-րդ հոդվածի 1-ին պարբերության, 245-րդ, 249-րդ, 251-րդ, 252-րդ, 275-րդ, 276-րդ, 278-րդ, 279-րդ, 281-րդ, 283-րդ հոդվածների և 282-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով, 2019 թվականի օգոստոսի 07-ին, քննության առնելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, առանց համապատասխան թույլտվության, Սիսիան-Երևան մայրուղի, թիվ 7 հասցեում կատարված ապօրինի շինարարություն հայտնաբերելու փաստով 2019 թվականի օգոստոսի 02-ի վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված թիվ 4 ստուգման ակտը և կից նյութերը՝ պարզեցի.

Սիսիան քաղաքի Հ. Որոտնեցի փ., տուն 13 հասցեի բնակիչ Աշոտ Կառլենի Հովհաննիսյանը /ծնվ.՝ 02.01.1978թ., նույնականացման քարտ՝ 000498162, տրված՝ 21.12.2012թ., 051-ի կողմից/, առանց համապատասխան թույլտվության, ինքնակամ Սիսիան-Երևան մայրուղի թիվ 7 հասցեում գտնվող սեփականության իրավունքով համայնքին պատկանող հողամասում իրականացրել է ապօրինի շինարարություն:

2019 թվականի օգոստոսի 07-ին՝ ժամը 11:30-ին, վարչական գործով նշանակված լսումին պատշաճ ծանուցված իրավախախտ Աշոտ Կառլենի Հովհաննիսյանը ներկայացել է:

Նկատի ունենալով, որ Աշոտ Կառլենի Հովհաննիսյանի արարքը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ և նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում է, ինչպես նաև ապահովելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջները՝ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ *որոշում եմ.*

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ և նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված, առանց համապատասխան թույլտվության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ապօրինի շինարարություն կատարելու փաստով՝ Աշոտ Կառլենի Հովհաննիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել տուգանք 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված տուգանքի մասին որոշումը ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900295101274 հաշվեհամարին, որը կամավոր չմուծելու դեպքում կգանձվի օրենքով նախատեսված հարկադիր կարգով:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով 10 /տասը/ օրվա ընթացքում:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 14
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2019 թվականի թիվ 706-Ա

ԷԴԻԿ ԳԵՆԻԿԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ և 26-րդ կետերով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1]-ին պրիմ հոդվածի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների, 37-րդ հոդվածի 1-ին պարբերության, 245-րդ, 249-րդ, 251-րդ, 252-րդ, 275-րդ, 276-րդ, 278-րդ, 279-րդ, 281-րդ, 283-րդ հոդվածների և 282-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով, 2019 թվականի օգոստոսի 07-ին, քննության առնելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի կողմից առանց համապատասխան թույլտվության, Սիսիան քաղաքի Սիսական փողոց 50/33 հասցեում կատարված ապօրինի շինարարություն հայտնաբերելու փաստով 2019 թվականի օգոստոսի 01-ին վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված թիվ 7 ստուգման ակտը և կից նյութերը՝ պարզեցի.

Սիսիան քաղաքի Սիսական փողոց 50 շենք 18 բնակարան հասցեի բնակիչ՝ Էդիկ Գենիկի Ալավերդյանը /ծնվ.՝ 31.10.1985թ.,անձնագիր՝ AR04983675, տրված՝ 17.10.2017թ., 051-ի կողմից/, առանց համապատասխան թույլտվության, ինքնակամ Սիսիան քաղաքի Սիսական փողոցի 50/33 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում իրականացրել է ապօրինի շինարարություն:

2019 թվականի օգոստոսի 07-ին՝ ժամը 12:30-ին, վարչական գործով նշանակված լսումին պատշաճ ծանուցված իրավախախտ Էդիկ Գենիկի Ալավերդյանը ներկայացել է:

Նկատի ունենալով, որ Էդիկ Գենիկի Ալավերդյանի արարքը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված վարչական իրավախախտում է, ինչպես նաև ապահովելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջները՝ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ *որոշում եմ.*

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված, առանց համապատասխան թույլտվության ապօրինի շինարարություն կատարելու փաստով Էդիկ Գենիկի Ալավերդյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել տուգանք 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված տուգանքի մասին որոշումը ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900295101274 հաշվեհամարին, որը կամավոր չմուծելու դեպքում կգանձվի օրենքով նախատեսված հարկադիր կարգով:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով 10 /տասը/ օրվա ընթացքում:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 14
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2019 թվականի թիվ 707-Ա

ԿԱՐԵՆ ԳՐԻՇԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ և 26-րդ կետերով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1-ին] պրիմ հոդվածի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների, 37-րդ հոդվածի 1-ին պարբերության, 245-րդ, 249-րդ, 251-րդ, 252-րդ, 275-րդ, 276-րդ, 278-րդ, 279-րդ, 281-րդ, 283-րդ հոդվածների և 282-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով, 2019 թվականի օգոստոսի 07-ին, քննության առնելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի կողմից առանց համապատասխան թույլտվության, Սիսիան քաղաքի Չարենցի փողոցի 12/1 հասցեում կատարված ապօրինի շինարարություն հայտնաբերելու փաստով 2019 թվականի օգոստոսի 02-ին վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված թիվ 5 ստուգման ակտը և կից նյութերը՝ *պարզեցի*.

Սիսիան քաղաքի 2-րդ փողոց տուն 4 հասցեի բնակիչ՝ Կարեն Գրիշայի Հովհաննիսյանը /ծնվ.՝ 10.01.1989թ., անձնագիր՝ AH0212643, տրված՝ 20.06.2006թ., 051-ի կողմից/, առանց համապատասխան թույլտվության, ինքնակամ՝ Սիսիան քաղաքի Չարենցի փողոցի 12/1 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասում իրականացրել է ապօրինի շինարարություն:

2019 թվականի օգոստոսի 07-ին՝ ժամը 12:00-ին, վարչական գործով նշանակված լսումին պատշաճ ծանուցված իրավախախտ Կարեն Գրիշայի Հովհաննիսյանը չի ներկայացել:

Նկատի ունենալով, որ Կարեն Գրիշայի Հովհաննիսյանի արարքը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված վարչական իրավախախտում է, ինչպես նաև ապահովելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջները՝ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ *որոշում եմ.*

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ նախատեսված, առանց համապատասխան թույլտվության ապօրինի շինարարություն կատարելու փաստով Կարեն Գրիշայի Հովհաննիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել տուգանք 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված տուգանքի մասին որոշումը ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900295101274 հաշվեհամարին, որը կամավոր չմուծելու դեպքում կգանձվի օրենքով նախատեսված հարկադիր կարգով:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով 10 /տասը/ օրվա ընթացքում:

Համայնքի ղեկավար **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 14
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2019 թվականի թիվ 708-Ա

ՍԱՄՎԵԼ ՍՊԱՐՏԱԿԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասինՀայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ և 26-րդ կետերով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 219[1-ին] պրիմ հոդվածի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների, 37-րդ հոդվածի 1-ին պարբերության, 245-րդ, 249-րդ, 251-րդ, 252-րդ, 275-րդ, 276-րդ, 278-րդ, 279-րդ, 281-րդ, 283-րդ հոդվածների և 282-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի պահանջներով, 2019 թվականի օգոստոսի 07-ին, քննության առնելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի կողմից Սիսիանի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, առանց համապատասխան թույլտվության, Սիսիան քաղաքի Որոտան փողոց 1-1/1 հասցեում կատարված ապօրինի շինարարություն հայտնաբերելու փաստով 2019 թվականի օգոստոսի 02-ին վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված թիվ 6 ստուգման ակտը և կից նյութերը՝ պարզեցի.

Սիսիան քաղաքի Խանջյան փողոց շենք 3ա բնակարան 6 հասցեի բնակիչ՝ Սամվել Սպարտակի Բաբայանը /ծնվ.՝ 15.05.1980թ., անձնագիր՝ AH0203654, տրված՝ 22.07.2012թ., 051-ի կողմից/, առանց համապատասխան թույլտվության, ինքնակամ՝ Սիսիան քաղաքի Որոտան փողոցի 1-1/1 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Սիսիանի համայնքին պատկանող հողամասում իրականացրել է ապօրինի շինարարություն:

2019 թվականի օգոստոսի 07-ին՝ ժամը 11:00-ին, վարչական գործով նշանակված լսումին պատշաճ ծանուցված իրավախախտ Սամվել Սպարտակի Բաբայանը ներկայացել է:

Նկատի ունենալով, որ Սամվել Սպարտակի Բաբայանի արարքը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ և նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտում է, ինչպես նաև ապահովելով «Վարչարարության և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջները՝ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ *որոշում եմ.*

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությամբ և նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված, առանց համապատասխան թույլտվության, Սիսիանի համայնքին պատկանող հողում, ապօրինի շինարարություն կատարելու փաստով Սամվել Սպարտակի Բաբայանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել տուգանք 400000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված տուգանքի մասին որոշումը ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչության 900295101274 հաշվեհամարին, որը կամավոր չմուծելու դեպքում կգանձվի օրենքով նախատեսված հարկադիր կարգով:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով 10 /տասը/ օրվա ընթացքում:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 14
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

15 օգոստոսի 2019 թվականի թիվ 709-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերն ու նկատի ունենալով Համլետ Բագրատի Թովմասյանի 2019 թվականի օգոստոսի 14-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Սիսական փողոցում գտնվող անշարժ գույքը՝ 0.0300հա հողամասը, հասցեավորել և տրամադրել Սիսիան քաղաք, Սիսական փողոց, թիվ 2/1 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Համայնքի ղեկավար **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 15
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

15 օգոստոսի 2019 թվականի թիվ 710-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերն ու նկատի ունենալով Նորա Բաբկենի Սիմոնյանի 2019 թվականի օգոստոսի 15-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Անգեղակոթ բնակավայրում գտնվող անշարժ գույքը՝ 0,151հա տնամերձ հողամասը (ծածկ՝. 09-013-090-001), հասցեավորել և տրամադրել Անգեղակոթ բնակավայր, 6-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 1 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 15
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2019 թվականի թիվ 711-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԺԴԵՀ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2ՀԱ ԽՈՏՀԱՐՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՐՏԻԿ ՎԱՐԴԱՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 96-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 389-Ն որոշումը, Սիսիանի համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 5-ի թիվ 50-Ն, 51-Ն որոշումներն ու նկատի ունենալով Մարտիկ Մինասյանի 2019 թվականի օգոստոսի 19-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող Նժդեհ բնակավայրում գտնվող 2հա խոտհարքը՝ համաձայն հավելվածի, տարեկան 5370 (հինգ հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ վարձավճարով, 3 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել Դաստակերտ բնակավայրի բնակիչ Մարտիկ Վարդանի Մինասյանին (անձն.՝ AM0390844, տրված՝ 25.07.2011թ., 051-ի կողմից)՝ խոտհարք կազմակերպելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող օրենքով սահմանված գործառույթները:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 19
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2019 թվականի թիվ 712-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Սիսիանի համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարել լրացումներ և գույքացանկ ներառել «Օքսիջեն» երիտասարդական և կանանց իրավունքների պաշտպանության հիմնադրամի կողմից նվիրաբերված 2 հատ թենիսի սեղան՝ 200000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ-տնտեսական զարգացման բաժնին՝ գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները ներկայացնել համայնքի ավագանու առաջիկա նիստի հաստատմանը:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 20
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2019 թվականի թիվ 713-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 6-րդ կետերն ու նկատի ունենալով անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Հարությունյանի հայտը՝ *որոշում եմ.*

1. Բավարարել Սիսիան քաղաքի Սիսական 41/1-1 հասցեում գործող Ա/Ձ Անդրանիկ Հարությունյանի 2019 թվականի համար ներկայացրած հայտը՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման թույլտվություն ստանալու մասին՝ եռամսյակային 15.000 ՀՀ դրամ վճարով:
2. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնին՝ 3 օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 21
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2019 թվականի թիվ 714-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱՐԵԿ ԵՂՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 6-րդ կետերն ու նկատի ունենալով անհատ ձեռնարկատեր Նարեկ Եղյանի հայտը՝ *որոշում եմ.*

1. Բավարարել Սիսիան քաղաքի Գայի փողոցի թիվ 4ա հասցեում գործող Ա/Ձ Նարեկ Եղյանի 2019 թվականի համար ներկայացրած հայտը՝ 60քմ տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ստանալու մասին՝ եռամսյակային 30.000 ՀՀ դրամ վճարով:
2. Հանձնարարել աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնին՝ 3 օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 21
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2019 թվականի թիվ 715-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասի 124-րդ կետով և նկատի ունենալով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ Սիմոն Հովհաննիսյանի 2019 թվականի օգոստոսի 19-ի զեկուցագիրը՝ *որոշում եմ.*

1. Բավարարել Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ Սիմոն Հովհաննիսյանի զեկուցագիրը՝ «ՀՀ Սյունիքի Մարզի Սիսիանի համայնքի Անգեղակոթ բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում» և «ՀՀ Սյունիքի Մարզի Սիսիանի համայնքի Որոտնավան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում» շինարարական աշխատանքների իրականացման վերաբերյալ և տալ շինարարության թույլտվություններ:
2. Աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 21
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

21 օգոստոսի 2019 թվականի թիվ 716-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՅԻՍ ԲԱԽՇՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ մասի 124-րդ կետով և նկատի ունենալով Մայիս Բախշյանի 2019 թվականի օգոստոսի 14-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Բավարարել քաղաքացի Մայիս Բախշյանի դիմումը Սիսիան քաղաքի Գ. Նժդեհի փողոց, շենք 3, բնակարան 2 հասցեում մուտքի կազմակերպման համար տրված 2018 թվականի ապրիլի 17-ի թիվ 7 շինարարության թույլատվության երկարացման վերաբերյալ և տալ շինարարության թույլտվություն:
2. Աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 21
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

23 օգոստոսի 2019 թվականի թիվ 717-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՇԽԱՆԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԱԽԿԻՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերն ու նկատի ունենալով Նարինե Արայիկի Մանուկյանի 2019 թվականի օգոստոսի 22-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սիսիանի համայնքի Իշխանասար բնակավայրի նախկին հրապարակ թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 0.0111հա հողամասը (ծածկ.՝ 09-060-014-004-001) և նրա վրա կառուցված 70քմ խանութը, վերահասցեավորել և տրամադրել Իշխանասար բնակավայր, 1-ին փողոց թիվ 1/1 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 23
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

23 օգոստոսի 2019 թվականի թիվ 718-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 4ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 96-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 389-Ն որոշումը, Սիսիանի համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 5-ի թիվ 50-Ն, 51-Ն որոշումներն ու նկատի ունենալով Վազգեն Խաչատրյանի 2019 թվականի օգոստոսի 23-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող Շաքի բնակավայրում գտնվող 4հա արոտավայրը՝ համաձայն հավելվածի, տարեկան 10320 (տասը հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ վարձավճարով, 3 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել Շաքի բնակավայրի բնակիչ Վազգեն Վարդանի Խաչատրյանին (անձն.՝ AM0437609, տրված՝ 29.08.2011թ., 051-ի կողմից)՝ արոտ կազմակերպելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող օրենքով սահմանված գործառույթները:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 23
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

23 օգոստոսի 2019 թվականի թիվ 719-Ա

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԼԵՏ ԲԱԳՐԱՏԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածով, 466-րդ հոդվածի 1-ին մասով ու նկատի ունենալով Համլետ Բագրատի Թովմասյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Լուծել Սիսիանի համայնքի և Համլետ Բագրատի Թովմասյանի միջև 2008 թվականի հունիսի 12-ին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիրը:
2. Ներել 1779360 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ վարձավճարը չվճարելու արդյունքում առաջացած ապառքը:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Համայնքի ղեկավար՝ **Ա.Սարգսյան**

2019թ. օգոստոսի 23
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոսի 2019 թվականի թիվ 720-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերն ու նկատի ունենալով Եղիա Հայկի Աթանեսյանի 2019 թվականի օգոստոսի 23-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Անգեղակոթ բնակավայրում գտնվող անշարժ գույքը՝ 0.1807հա տնամերձ հողամասը (ծածկ՝. 09-013-0039-0002) հասցեավորել և տրամադրել Անգեղակոթ բնակավայր, 5-րդ փողոց, 4-րդ փակուղի, թիվ 9 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 26
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոսի 2019 թվականի թիվ 721-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԳԵՂԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերն ու նկատի ունենալով Եղիա Հայկի Աթանեսյանի 2019 թվականի օգոստոսի 23-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Անգեղակոթ բնակավայրում գտնվող անշարժ գույքը՝ 0,1557հա տնամերձ հողամասը (ծածկ՝. 09-013-0039-0001) հասցեավորել և տրամադրել Անգեղակոթ բնակավայր, 5-րդ փողոց, 4-րդ փակուղի, թիվ 9/1 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 26
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոսի 2019 թվականի թիվ 722-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱԼՎԱՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերն և նկատի ունենալով Անդրանիկ Սենիկի Իվանյանի 2019 թվականի օգոստոսի 23-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Սալվարդ բնակավայրում գտնվող անշարժ գույքը՝ 0.013հա հողամասը (ծածկ՝. 09-080-0037) և նրա վրա կառուցված 118.82քմ շինությունը, համաձայն հատակագծի, հասցեավորել և տրամադրել Սալվարդ բնակավայր, 1-ին փողոց, թիվ 36/7 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 26
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

26 օգոստոսի 2019 թվականի թիվ 723-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԲԱՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերն և նկատի ունենալով Էմմա Աշոտի Ամիրխանյանի 2019 թվականի օգոստոսի 26-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Դարբաս բնակավայրում գտնվող անշարժ գույքը՝ 0.189հա տնամերձ հողամասը (ծածկ՝. 09-031-053-011), հասցեավորել և տրամադրել Դարբաս բնակավայր, 15-րդ փողոց, թիվ 2 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

/Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 26
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

27 օգոստոսի 2019 թվականի թիվ 724-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒ ՎՐԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 51-րդ և 52-րդ կետերը և «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Սիսիանի տարածքային ներկայացուցչության 2019 թվականի հունիսի 20-ի թիվ Ս-294 տեղեկանքը ու նկատի ունենալով Սուսաննա Երվանդի Խաչատրյանի 2019 թվականի օգոստոսի 19-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Երիտասարդական փողոցում գտնվող 0.0400հա հողամասը, հողամասին կից Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում չգտնվող, քաղաքաշինական նորմերին չհակասող և սերվիտուտ չառաջացնող ու քաղաքացի Սուսաննա Երվանդի Խաչատրյանի կողմից ավել տիրապետվող 0.0300հա հողամասը և հողամասերի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված 144.21քմ շենքը և շինությունները ճանաչել տիրապետողի՝ Սուսաննա Երվանդի Խաչատրյանի (ծնվ.՝ 05.03.1959թ., անձն.՝ AH0412583, տրվ. 26.10.2007, 051-ի կողմից) սեփականությունը՝ համաձայն հողամասի հատակագծի:
2. Գույքը տիրապետող Սուսաննա Երվանդի Խաչատրյանի սեփականությունը ճանաչված անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Սիսիան քաղաք, Երիտասարդական փողոց, թիվ 33 հասցեն:
3. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքի պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 27
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

27 օգոստոսի 2019 թվականի թիվ 725-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԴԱՍՏԱԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 54ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ՌՇՏՈՒՆՈՒ ԲԱԿՈՒՆՑԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 96-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը սահմանելու մասին» թիվ 389-Ն որոշումը և Սիսիանի համայնքի ավագանու 2018 թվականի հունիսի 5-ի թիվ 50-Ն, 51-Ն որոշումներն ու նկատի ունենալով Արմեն Ռշտունու Բակունցի 2019 թվականի օգոստոսի 26-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Դաստակերտ բնակավայրում գտնվող 54հա արոտավայրը՝ համաձայն հավելվածի, տարեկան 202500 (երկու հարյուր երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով, 2 տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել Գորիսի համայնքի Վերիշեն բնակավայրի բնակիչ Արմեն Ռշտունու Բակունցին (անձն.՝ AM0311557, տրված՝ 24.05.2011 թ., 032-ի կողմից)՝ արոտ կազմակերպելու նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող օրենքով սահմանված գործառույթները:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 27
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2019 թվականի թիվ 726-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՆ ԴԻԶԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Սիսիանի համայնքի բնակավայրերում հրատապ աշխատանքները կազմակերպելու և կատարելու նպատակով 230լ դիզելային վառելիք տրամադրել համայնքի բնակավայրերին՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ-տնտեսական զարգացման ու քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժինների պետերին և բնակավայրերի վարչական ղեկավարներին՝ տրամադրված դիզելային վառելիքի օգտագործման և կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն (Ակտ):

Համայնքի ղեկավար՝ Ա. Սարգսյան

2019թ. օգոստոսի 28
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2019 թվականի թիվ 727-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերն ու նկատի ունենալով Եղիշե Ենոքի Մարգարյանի 2019 թվականի օգոստոսի 28-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Հացավան բնակավայրում գտնվող անշարժ գույքը՝ 0,3հա տնամերձ հողամասը (ծածկ՝. 09-057-018-001) և նրա վրա կառուցված շինությունները, հասցեավորել և տրամադրել Հացավան բնակավայր, 1-ին փողոց, թիվ 63 հասցեն:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ **Ա. Սարգսյան**

2019թ. օգոստոսի 28
ք.Սիսիան